Կ-1000-27.01.2025-ԳԿ-011

Նախագիծ
Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 8-րդ կետում «միավորում» բառից հետո լրացնել «կամ հանրակրթական ուսումնական հաստատության տեսակ, որն ըստ նշանակության գործում է նաև որպես համայնքային զարգացման կենտրոն՝ իրականացնելով հանրակրթության բոլոր մակարդակները (այդ թվում՝ նախադպրոցական) և արտադպրոցական կրթություն, ինչպես նաև համայնքի կարիքներից ելնելով՝ իրականացնում է ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում) մեծահասակների համար, նաև երիտասարդների համար նախատեսված մշակութային, տեխնոլոգիական, մարզական ծառայություններ» բառերը:

2) 1-ին մասի 27-րդ կետից հետո «:» կետրադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել նոր՝ 28-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«28) ղեկավարման իրավունքի հավաստագիր՝ նախադպրոցական, հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների հավակնորդների համար կրթության պետական կառավարման լրազորված մարմնի կազմակերպած թեստավորման դրական արդյունքի ապահովման դեպքում տրվող փաստաթուղթ:»:

Հոդված 2. Օրենքի 36-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 6.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.4) սահմանում է արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և կենտրոնների մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագիրը.»:

2) 1-ին մասի 6.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.5) սահմանում է պետական բյուջեից ֆինանսավորվող արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ֆինանսավորման կարգը.»:

Հոդված 3. Օրենքի 37-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3.3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2) Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում 3.3-րդ կետից հետո լրացնել նոր՝ 3.4-րդ, 3.5-րդ և 3.6-րդ կետեր՝ հետևյալ բովանդակությամբ.

«3.4) հաստատում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների օրինակելի ուսումնական պլանները.

3.5) հաստատում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների ընդունելության կազմակերպման և ավարտական քննությունների անցկացման կարգը.

3.6) երաշխավորում է նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում պետական, ինչպես նաև այլ ծրագրերով կիրառման

ենթակա ծրագրերը (այդ թվում՝ փորձարարական), ուսումնական նյութերն ու դասընթացները:

Հոդված 4. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում 12.1-ին կետից հետո լրացնել նոր՝ 12.2-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12.2) սահմանում է նախադպրոցական, հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի տրամադրման կարգը.»:

Հոդված 5. Օրենքի 40-րդ հոդվածից հետո լրացնել նոր՝ 40.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«40.1. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի համար դիմելու որակավորման պահանջը և հավաստագրի դադարեցման հիմքերը

1. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի համար կարող է դիմել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական կամ գիտամանկավարժական աշխատանքի կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

2. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի գործողությունը դադարեցվում է հետևյալ դեպքերում՝

1) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի կողմից հավաստագիր ստանալու համար ներկայացրած փաստաթղթերում կեղծ տեղեկատվություն հայտնաբերվելու.

2) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի կողմից ուսումնադաստիարակչական գործառույթների հետ անհամատեղելի արարք թույլ տալու.

3) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի կողմից պաշտոնավարման ընթացքում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «է» ենթակետով սահմանված չափով պետությանը ֆինանսական և գույքային վնաս պատճառելու.

4) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի՝ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու.

5) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի՝ դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու.

6) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի այնպիսի հիվանդությամբ տառապելու, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը.

7) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի՝ հանցագործության համար դատապարտվելու և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելու, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:»:

Հոդված 6.Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ.

1) Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2) Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ հոդվածի 3.4-րդ և 3.5-րդ կետերով և 4-րդ հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասներկուամսյա ժամկետում:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Կրթության մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-297 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 8-րդ կետում «միավորում» բառից հետո լրացնել «կամ հանրակրթական ուսումնական հաստատության տեսակ, որն ըստ նշանակության գործում է նաև որպես համայնքային զարգացման կենտրոն՝ իրականացնելով հանրակրթության բոլոր մակարդակները (այդ թվում՝ նախադպրոցական) և արտադպրոցական կրթություն, ինչպես նաև համայնքի կարիքներից ելնելով՝ իրականացնում է ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում) մեծահասակների համար, նաև երիտասարդների համար նախատեսված մշակութային, տեխնոլոգիական, մարզական ծառայություններ» բառերը:

~~1)~~

~~1)~~2) 1-ին մասի 27-րդ կետից հետո «:» կետրադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և լրացնել նոր՝ 28-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«28) ղեկավարման իրավունքի հավաստագիր՝ նախադպրոցական, հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների հավակնորդների համար կրթության պետական կառավարման լրազորված մարմնի կազմակերպած թեստավորման դրական արդյունքի ապահովման դեպքում տրվող փաստաթուղթ:»:

Հոդված 2. Օրենքի 36-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 6.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.4) սահմանում է արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և կենտրոնների մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկն ու դրանց նկարագիրը.»:

2) 1-ին մասի 6.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6.5) սահմանում է պետական բյուջեից ֆինանսավորվող արտադպրոցական կազմակերպությունների և կենտրոնների ֆինանսավորման կարգը.»:

Հոդված 3. Օրենքի 37-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի 3.3-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2) Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում 3.3-րդ կետից հետո լրացնել նոր՝ 3.4-րդ,
3.5-րդ և 3.6-րդ կետեր՝ հետեւյալ բովանդակությամբ.
«3.4) հաստատում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների օրինակելի ուսումնական պլանները.
3.5) հաստատում է երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների ընդունելության կազմակերպման և ավարտական քննությունների անցկացման ~~ընթացա~~կարգը.

3.6) երաշխավորում է նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում պետական, ինչպես նաև այլ ծրագրերով կիրառման ենթակա ծրագրերը (այդ թվում՝ փորձարարական), ուսումնական նյութերն ու դասընթացները:

~~3.6) երաշխավորում է նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվող ծրագրերը, ուսումնական նյութերն ու դասընթացները,- այդ թվում՝ փորձարարական:»:~~
Հոդված 4. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասում 12.1-ին կետից հետո լրացնել նոր՝ 12.2-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.
~~1)~~ «12.2) սահմանում է նախադպրոցական, հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի տրամադրման ~~ընթացակարգը, հավաստագրի դադարեցման դեպքերն ու ընթացակարգը~~ կարգը.»:
Հոդված 5. Օրենքի 40-րդ հոդվածից հետո լրացնել նոր՝ 40.1-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«40.1. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի համար դիմելու որակավորման պահանջը և հավաստագրի դադարեցման հիմքերը

1. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի համար կարող է դիմել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական կամ գիտամանկավարժական աշխատանքի կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ:

2. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի գործողությունը դադարեցվում է հետևյալ դեպքերում՝

1) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի կողմից հավաստագիր ստանալու համար ներկայացրած փաստաթղթերում կեղծ տեղեկատվություն հայտնաբերվելու.

2) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի կողմից ուսումնադաստիարակչական գործառույթների հետ անհամատեղելի արարք թույլ տալու.

3) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի կողմից պաշտոնավարման ընթացքում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «է» ենթակետով սահմանված չափով պետությանը ֆինանսական և գույքային վնաս պատճառելու.

4) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի՝ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու.

5) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի՝ դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու.

6) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի այնպիսի հիվանդությամբ տառապելու, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը.

7) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի՝ հանցագործության համար դատապարտվելու և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելու, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:»:

~~*Հոդված 5.*~~ *Հոդված 6.* **Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, 3-րդ հոդվածի ~~1-ին մասի 2-րդ կետով և 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով~~ 3.4-րդ և 3.5-րդ կետերով և 4-րդ հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տասներկուամսյա ժամկետում~~:~~

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1000-27.01.2025-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	Կառավարություն	**1-ին հոդված**	**Նախագծի 1-ին հոդվածը առաջարկում ենք լրացնել նոր 1-ին մասով՝ գործող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում՝** «միավորում» բառից հետո լրացնելով «կամ հանրակրթական ուսումնական հաստատության տեսակ, որն ըստ նշանակության գործում է նաև որպես համայնքային զարգացման կենտրոն՝ իրականացնելով հանրակրթության բոլոր մակարդակները (այդ թվում՝ նախադպրոցական) և արտադպրոցական կրթություն, ինչպես նաև համայնքի կարիքներից ելնելով՝ իրականացնում է ոչ ֆորմալ կրթություն (ուսուցում) մեծահասակների համար, նաև երիտասարդների համար նախատեսված մշակութային, տեխնոլոգիական, մարզական ծառայություններ» բառերը: **Լրացումը կատարվել է, քանի որ գործող օրենքում «կրթահամալիր» հասկացությունը վերաբերելի է բուհերին և սահմանված է այլ իմաստով, իսկ նոր բովանդակությամբ «կամ» շաղկապով լրացվող ձևակերպումը**	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հասկացության մեջ կապահովի այն բոլոր բաղադրիչների ներառումը, ինչը նախատեսվում է ունենալ ՀՀ կառավարության 300 դպրոց 500 մանկապարտեզ ծրագրով համայքներում կրթահամալիրների հիմնման արդյունքնում: **Ըստ այդմ, նախագծի 1-ին հոդվածի մասերի համարակալումը վերանայվել է:**		
2.	Կառավարություն	**3-րդ հոդված**	**3-րդ հոդվածի 2-րդ մասով լրացվող 3⍰5-րդ կետում լիազորող նորմի «ընթացակարգը» բառի փոխարեն լրացնել «կարգը» բառը:** **Փոփոխությունը կատարվել է օրենքում առկա լիազորող նորմերի տրամաբանությանը համապատասխանեցնելու նպատակով:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
3.	Կառավարություն	**3-րդ հոդված**	**Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ կետով լրացվող 3.6-րդ կետը՝** **«Երաշխավորում է նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվող ծրագրերը, ուսումնական նյութերն ու դասընթացները, այդ թվում՝ փորձարարական» բառերը առաջարկում ենք խմբագրել հետևյալ բովանդակությամբ⍰** «3⍰6) Երաշխավորում է նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում պետական, ինչպես նաև այլ ծրագրերով կիրառման ենթակա ծրագրերը (այդ թվում՝ փորձարարական), ուսումնական նյութերն ու դասընթացները»: **Խմբագրությամբ պետական պարտադիր, ինչպես նաև այլ կազմակերպությունների կողմից առաջարկվող տարաբնույթ ծրագրերի ու դասընթացների իրականացման համար սահմանվել է հստակ կարգավորում, որպեսզի պետական հիմնական ծրագրերի երաշխավորման գործընթացից բացի, նախադպրոցական, հանրակրթական և արտադպրոցական ուսումնական**	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հաստատություններում այլ կազմակերպությունների կողմից առաջարկվող տարաբնույթ ծրագրերն ու դասընթացները ներդնելուց առաջ վերջինները ծրագրերի բովանդակությունը համաձայնեցնեն ԿԳՄՍ նախարարության հետ՝ հաշվի առնելով, որ երբեմն հաստատություններում որոշ կազմակերպություններ փորձում են իրականացնել իրենց մտահղացումները՝ ուղիղ դիմելով հաստատություններին, շրջանցելով ԿԳՄՍ նախարարությանը:		
4.	Կառավարություն	**4-րդ հոդված**	**Նախագծի 4-րդ հոդվածի՝** **1. համարակալումը հանել,** **2. «ընթացակարգը, հավաստագրի դադարեցման դեպքերն ու ընթացակարգը» բառերը հանել՝ փոխարենը լրացնել «կարգը.» բառը:** **Փոփոխությունը կատարվել է օրենքում առկա լիազորող նորմերի տրամաբանությանը համապատասխանեցնելու նպատակով, ինչպես նաև հանված հավաստագրի դադարեցման դեպքերի մասը առաջարկում ենք սահմանել սույն օրենքում՝ առանձին հոդվածով (նախագիծը լրացվել է նոր 5-րդ հոդվածով):**	Ընդունվել է:	Ընդունվել է:
5.	Կառավարություն	4-րդ հոդվածից հետո լրացվող նոր 5-րդ հոդված	**Նախագիծը առաջարկում ենք լրացնել նոր 5-րդ հոդվածով՝ որով օրենքի 40-րդ հոդվածից հետո լրացվում է նոր 40.1 հոդված հետևյալ բովանդակությամբ՝** ««40.1. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի համար դիմելու որակավորման պահանջը և հավաստագրի դադարեցման հիմքերը 1. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի համար կարող է դիմել այն անձը, որն ունի բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում մանկավարժական կամ գիտամանկավարժական աշխատանքի կամ կառավարման ոլորտի առնվազն հինգ կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ: 2. Նախադպրոցական, հանրակրթական և մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի գործողությունը դադարեցվում է հետևյալ դեպքերում՝ 1) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի կողմից հավաստագիր ստանալու համար ներկայացրած փաստաթղթերում կեղծ տեղեկատվություն հայտնաբերվելու. 2) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի կողմից ուսումնադաստիարակչական գործառույթների հետ անհամատեղելի արարք թույլ տալու. 3) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի կողմից պաշտոնավարման ընթացքում «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի «է» ենթակետով սահմանված չափով պետությանը ֆինանսական և գույքային վնաս պատճառելու. 4) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի՝ դատական կարգով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվելու. 5) ղեկավարման իրավունքի հավաստագիր		

			ստացած անձի՝ դատական կարգով մանկավարժական կամ վարչական գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու. 6) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի այնպիսի հիվանդությամբ տառապելու, որը կարող է խոչընդոտել մանկավարժական կամ վարչական գործունեության կատարմանը. 7) ղեկավարման իրավունքի հավաստագիր ստացած անձի՝ հանցագործության համար դատապարտվելու և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելու, բացառությամբ այն դեպքերի, երբ դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:»: » **Լրացմամբ սահմանվել է նախադպրոցական, հանրակրթական, մասնագիտական ուսումնական հաստատությունների ղեկավարման իրավունքի հավաստագրի դիմող հավակնորդների համար սահմանվող ընդհանրական պահանջի և հավաստագրի դադարեցման դեպքերը:** **Սույն կարգավորումները օրենքում ներառվել են՝ հաշվի առնելով, որ նշված 3 ոլորտների հավաստագրման գործընթացը միավորված է լինելու՝ մեկ ընթացակարգով, նաև քանի որ անձի իրավունքից զրկելու դեպքերը օրենքի կարգավորման առարկա են, և նպատակահարմար է նույն տրամաբանությամբ սահմանել սույն օրենքով:** **Ըստ այդմ նախագծի հոդվածների**		

			համարակալումը վերանայվել է:		
6.	Կառավարություն	5-րդ՝ (լրամշակված 6-րդ) հոդվածի 2-րդ կետ	«1-ին մասի 2-րդ կետով և 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով» բառերի փոխարեն լրացնել «3.4-րդ և 3.5-րդ կետերով և 4-րդ հոդվածով» բառերը, միևնույն ժամանակ «ենթաօրենսդրական» բառից հետո առաջարկում ենք լրացնել «նորմատիվ» բառը: **Անցումային դրույթներից հանվել է Նախագծի 3-րդ հոդվածում 3.6-րդ կետով սահմանվող մասը՝ հաշվի առնելով, որ այն՛ հաստատություններում գործածվող ծրագրերին հավանություն տալու մասին դրույթ է, այլ ոչ թե կարգի լիազորող նորմ: Միևնույն ժամանակ հաշվի առնելով Նախագծի 4-րդ հոդվածում ընդամենը մեկ կետ է, նույն հոդվածին վերաբերող ձևակերպումից 1-ին կետը հանվել է:**	Ընդունվել է:	Ընդունվել է: